ՍՈՒՐՀԱՆԴԱԿ
ԲԻՒԶԱՆԴԵԱՆ

# ԼՐԱԳԻՐ
# ՏԷՐՈՒԹԵԱՆ ՕՍՄԱՆԵԱՆ

1850 — 11 ՓԵՏՐՎԱՐ | ԹԻՒ — 136 | ՌԷՊԻՒԼ ԱԽԸՐ 11 — 1266

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նիշի կուսակալ վեհմակալ Վասըֆ փաշան Գիւլլաստի կողմնակալ անուանեցաւ։

— Բոսնայի նախկին համարակալ Հիւսէյին էֆէնտին միրի միրանութեան աստիճանը առնելով Նիշի կուսակալից կարգեցաւ։

— Ռումէլիի բանակին երեւելի մերակացու պաշտօնատարէ Միրի լիվա Խուրշիտ փաշան միրի միրանութեան աստիճանը առնելով Ռումէլիի կուսակալից դրուեցաւ։

— Հոգաբարձութեան ատեանին անդամ Նուրի պէյ էֆէնտին երկրորդ աստիճանին երկրորդ կարգի պատիւը առաւ։

— Գերագոյն ատեանին դրութեանցը վերակացու Շէֆիգ պէյ էֆէնտին և նոյն ատեանին թղթակցութեան դրանը վերակացու Նուրի էֆէնտին առաջին աստիճանին երկրորդ կարգի պատիւը առին։

— Ելեւմտից ատեանին մատենադպրի դպրատանը պաշտօնեայ Էմին էֆէնտին երկրորդ աստիճանին առաջին պաշտօնեայ կարգը մտնելով նոյն ատեանին երրորդ գրագիր դրուեցաւ։

— Մուսթաֆա Պէհճէթ էֆէնտին Ալանիայի կուսակալին փոխանորդ Հիլմի փաշային դափու քէհեայ կոչուեցաւ։

— Ասատ Ճէմիլ էֆէնտին Ռումէլիի կուսակալին փոխանորդ Խուրշիտ փաշային դափու քէհեայ եղաւ։

— Բոսնայի սրբանի եկամտից վերակացու Զէքի էֆէնտին երկրորդ աստիճանին երկրորդ կարգը անցնելով Բոսնայի համարակալ կարգեցաւ։

— Ալնիկ նահանգին նախկին տեղակալ Քամիլ պէյ էֆէնտին որ երկրորդ աստիճանը ունի, Գօզանի սրբանի եկամտից վերակացու անուանեցաւ։

— Պիդլիսի սրբանի եկամտից վերակացու Հասան Պոշի էֆէնտին Իչէլ նահանգին տեղակալ դրուեցաւ։

— Պօլօզ նահանգին սրբանի եկամտից նախկին վերակացու Դալիլ էֆէնտին Գարա Հիսարի տեղակալ եղաւ։

— Կայսերական սենեկապետութեան աստիճանը ունեցող Մէհմէտ պէյը Մարաշի տեղակալ կոչուեցաւ։

— Գերագոյն ատեանին մատենադպրի դպրատանը ընտիր գործակալ Ալի պէյը ու Շէֆքէթ պէյ էֆէնտին երրորդ աստիճանը առին։

— Եշրեֆ պէյ էֆէնտին որ մանաւանդ բարձրագոյն Փոխարքային թղթակցութեան դրատանը գործակալ դրուեցաւ, երրորդ աստիճանը առաւ։

— Մօտերս նոյն դրատանը գործոյն դրուող Քամիլ պէյ էֆէնտին ալ չորրորդ աստիճանը ընկալաւ։

— Հալէպի կուսակալ վեհմակալ Խալիլ փաշան այն տեղի օդը ու ջուրը իրեն չը յարմարելուն՝ խնդիր մատուցեր էր մեծազօր Տէրութեանը, թէ Իզմիր նահանգը հրաման ըլլայ իրեն. որուն խնդիրը ընդունելով կատարուեցաւ. վասն որոյ նոյն փաշան մօտերս Այտընէն ելլալով Իզմիր պիտի գայ։

— Հոլէնտական կառավարութեան կողմանէ Պօլսոյ գործակալ դրուող Գ. Տէլի Եանին մօտերս Պոլիս հասաւ, և անցեալ երկուշաբթի օրն ալ բարձրագոյն դուռը այցելութեան գնաց։

— Նախընթաց թերթերուն մէկին մէջ յիշեցինք՝ թէ Ինկիլթէռայի ազնուականներէն ոմանք պարսկական եղանակին քանի մը որոշընթաց ձիեր Եգիպտոս բերելու միտ ունին՝ Եգիպտոսի Փոխարքային բարեկամական Ապպաս փաշային ձիերուն հետ վարել բռնել տալու համար։ Նոր եկած օրագիրները կը հաստատեն՝ թէ այն ազնուականները քանի մը պատուական ձի զատելով հիմակուընէ չոգենաւ պիտի գնեն ու Աղեքսանդրիա պիտի իջնեն, պայց որ գարնանային եղանակին հոն գտնուին։

— Անցեալ չորեքշաբթի ժամը երկուքուկէսին ատենները Գուրու չէշմէ ըսուած Երկանեան ազնուազարմ սարրաֆ Գրիգոր աղային ծովեզերեայ ընակարանին դիպուածքով մը հրդեհ պատահեցաւ ու հինգ տուն այրեցաւ։

— Նախընթաց շաբաթ օրն ալ իրիկուան դէմ Սուլթան Ահմէտ ձամիին քովը քէմէր ալթը ըսուած տեղը Մուսթաֆա պէյին տունէն հրդեհ պատահեցաւ ու հինգ տուն մոխիր դարձաւ։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աթէնք նոյն Անգղիոյ դեսպանը այն կողմերը գտնուող իր տէրութեանը նաւախումբին հրամանատար Փարկէր ծովակալին հետ անոր երկուքին Յունաց տէրութեան արտաքին գործոց պաշտօնեային տունը գնալով ըսաւ թէ՝ «Յունաստանի նիւթին գործերը բոլոր արժանեացը չեն կատարուիր»։ Նա ասոնց վրայօք քիչ մը բան խօսելէն ետև շարունակեց իր խօսքը ըսելով թէ՝ «Նախ՝ ասկէ քանի մը տարի յառաջ Բորթուգալի տէրութեան նախկին հիւպատոսին տունը աւար առին. երկրորդ՝ Մանեայի ծովեզերքը Անգղիացի վաճառականի նաւ մը ցամաքը իյնալով մէջը գտնուած ապրանքը նմանապէս կողոպտեցին. երրորդ՝ Պոյեա Պառէրօ գրանուած Անգղիոյ հիւպատոսարանին անարգութիւն ցոյց տուին. չորրորդ՝ դարձեալ Պոյեա Պառէրոյի մէջ Անգղիոյ հպատակ Հէլլէնացի մը դէմ ալ մեծ անարգութիւն ու խստութիւն բանեցուցին. հինգերորդ՝ անցեալ տարի աւազակները քանի մը Անգղիայի ձկնորսներուն ինչքը յափշտակեցին. վեցերորդ՝ հարկը կը պահանջէ որ Մօրայի ծովեզերքը եղած Սափիենս կղզիները շուտով իր տէրութեանը յանձնուին»։

Դեսպանը այս վեց նիւթին վրայօք խօսելէն ետև՝ հինգ բանին համար քսա կանոնի խրատանք պահանջեց և նոյն կղզիները շուտով յանձնուելու համար ալ ոտք կոխեց. Փարկէր ծովակալն ալ ըսաւ. որ ինքն այսօր հոս գալը՝ նոյն վեց գործոյն կատարմանը համար է։ Յոյն արտաքին գործոց պաշտօնեան պատասխանեց թէ՝ ինքը այս պաշտօնին անցնելը խիստ քիչ ատենէ՝ ի վեր ըլլալուն՝ նոյն գործերուն վրայօք տեղեկութիւն մը չունի, վասն որոյ ինքը միայն պատասխան չը կրնար տալ։ Այս ըսելով՝ եղելութիւնը իմացուց միւս պաշտօնեայներուն. որոնք ժողով մը ըրին մէջերնին և երկարօրէն խօսելէն յետոյ՝ որոշեցին որ չընդունին այն վեց առաջարկութիւնը, և դեսպանին ալ իմացուցին իրենց որոշումը. բայց երկու կողմէն դրուած գինը՝ ի պաշտօնէ չըլլալուն, պատճառ բռնելով քիչ մը ատեն ալ երկարեցաւ բանը։

Յունական պաշտօնեայները վերստին ժողով ըրին, ուր անոր ներկայ էին ազգային ժողովոյն անդամները և օտար տէրութեանց դեսպանները։ Նոյն անդամները ուզեցին որ այս բանին ծանրութիւնը և ինչպէս ըլլալը երևան ելլայ. բայց արտաքին գործոց պաշտօնեային խորհուրդ է՝ ըսելով՝ չը յայտնեց։ Վերջապէս հաստատուեցաւ ալ որ նոյն առաջարկութիւնները ընդունելի պիտի չըլլան. ուստի Անգղիոյ դեսպանը իր դեսպանատունէն ելլալով՝ Փարկէր ծովակալին գրանուած նաւը գնաց, որ Աթէնքի առաջքը կանգնած էր, և Աթէնա քաղաքը միայն Անգղիոյ վաճառականներուն գործը Փիրէա նաւահանգիստը նստող Անգղիոյ հիւպատոսին յանձնեց, ու միւս գործերուն չը նայեցաւ։

